

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ռ Ո Ւ Ս Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Ռուսաստանի Լուսաւորիչ Ս. Վլադիմիրը:

(1915—1915)

Անցեալ Յուլիսի 15-ին լրացաւ 900 տարի այն օրից, երբ վախճանուեց Ռուսաստանի Լուսաւորիչ և Մկրտիչ առաքեալի համահաւասար ս. Վլադիմիրը:

Ռուսաստանը, իբրեւ ազգ և պետութիւն մկրտուել է ս. Վլադիմիրի ձեռքով: Քրիստոնէութիւնը Ռուսաստան մուտք է կոխում XII դարում, իսկ Կիևի կողմերը Վլադիմիրից միայն 100 տարի առաջ: Մի քանի պատմաբաններ Ռուսաց ժողովրդի մի մասի մկրտութիւնը զանազան տեղերում ընդունում են՝ որ եղել է Վլադիմիրից առաջ:

Ս. Վլադիմիրի ամենամեծ ծառայութիւնը, որով նորա անունը անմահացրել է, եղել է այն, որ կատարել է Կիև-Նովգորոդեան Ռուսաստանի ընդհանուր մկրտութիւն: Վլադիմիրից սկսած կռապաշտութիւնը հետզհետէ չքանում է Ռուսաստանի հորիզոնից և թագաւորում է քրիստոնէական կրօնը: Ռուս ժողովուրդը քրիստոնէական կրօնի շնորհիւ սերտ կերպով միանում է և առաջ տանում իւր քաղաքակրթական կեանքը: Այժմ՝ այս պատմական ծանր օրերում ս. Վլադիմիրի մահուան 900 ամեակը աւելի քան նշանակալից է դառնում ամբողջ Ռուսաստանի համար, որ Ռուս ժողովուրդը աւելի մեծ թափով պէտք է կռուի իւր թշնամիների դէմ և թոյլ չտայ որ վիրաւորուի իւր ազգային զգացմունքը:

Վեթի եւ գայրոյթի գիրքը: Այս տարուայ ամառը արտասահմանում լոյս է տեսել մի գիրք, որ գրաւել է շատերի ուշադրութիւնը: Այդ գիրքը կրում է «Y'Accuse!» վերնագիրը և տպագրուած է Շվեյցարիայի Լօզան քաղաքում, գրուած է գերմաներէն և նորա անանուն հեղինակն է գերմանացի: Գիրքը արդարեւ արժանի է ամենախորին ուշադրութեան իւր ճշմարտապատում բովանդակութեան համար: Ամբողջ գիրքը լի է գայրոյթով և վշտով՝ ուղղուած Գերմանիային, որը «չափ վաղուց պատրաստուել է յարձակողա-

կան պատերազմի համար, մինչդեռ խաղաղութեամբ հաւատա-
ցրել է իւր գերման ժողովրդին, և ամբողջ աշխարհին՝ որ իբրեւ
այս պատերազմն անուամ է պաշտպանուելու իւր թշնամիներից,
և այդ ստութեամբ բերել է մարդկութեան գլխին ամենամեծ և
չլսուած դժբախտութիւնները, հասցրել է անբուժելի վէրք, որը
երկար տարիներ սերունդէ սերունդ ցաւ կը պատճառի մարդկու-
թեան: Սակայն իրականապէս չեթէ շարունակի յաղթել, այդ յաղ-
թութիւնը Գերմանիային մահ կը բերի և ոչ կեանք, Wenn Deu-
tschland noch weiter «siegte», wie bisher, so wird es sich zu Tode
siegen: Այդ է այս նշանաւոր գրքի ընդհանուր բնոյթը և հիմնա-
կան միտքը:

Անանուն հեղինակը հաւատացած է՝ որ այդ գրքի պատճա-
ռով իւր հայրենակիցները պէտք է սաստիկ զայրանան և անիծեն,
բայց ինքը որոշել է հշմարտութիւնը նկատել իւր հայրենիքի
հակառակորդի համար և իւր խիղճն ազատ է: Նա իւր գրքի մէջ
ասում է իւր հայրենակիցներին. «Հասակաւոր երեխաներ, բացա-
կանչել է հեղինակը, դուք ամուր կերպով ծածկում էք ձեր աչ-
քերը, որպէսզի չտեսնէք վտանգը: Բայց չէ՞ որ թշնամիները
վաղուց են նկատել այդ վտանգը, որ սպառնում է Գերմանիային»:
Այնուհետեւ հեղինակը պարզում է՝ թէ ժվ է եղել այս համաշխար-
հային պատերազմի հեղինակը: Նա բացականչում է՝ որ այս պա-
տերազմը ծրագրել և պատրաստել է Գերմանիան Աւստրո-Վեն-
գրիայի հետ:

Գերմանական կառավարութիւնը աշխատել է հաւատացնել
իւր ժողովրդին՝ որ նախ իրենք ստիպուած են պաշտպանուել
թշնամիներից՝ և երկրորդ պահպանել Գերմանիայի ազատութիւնը:
Գերմանական կառավարութիւնն այդ միջոցն էր ընտրել արդա-
րանալու իւր նախաձեռնութեամբ առաջ բերած աշխարհաւեր
պատերազմի համար, սակայն իրականապէս նպատակ է ունեցել
տիրանալ Եւրոպայի ցամաքի մեծագոյն մասին և խլել Անգլիայի
առաջնութիւնը տիեզերական պետութեան և ըստ սկզբունքի—
«côte toi que je m'y mette»,—բռնել նորա տեղը: Այնուհետեւ գրքի
հեղինակը մանրամասն բաղմաթիւ օրինակներ է բերում ցոյց
տալով՝ որ Գերմանիան յանցաւոր է և ասում է. «Գերմանիան ձեռ-
նարկել է յանցաւոր գործ, կատարել մեծ ոճրագործութիւն պատ-
մութեան առաջ, և հէնց իրեն Գերմանիայի առաջ: Ապա հա-
մոզուած կերպով բացատրում է՝ որ այնուամենայնիւ Գերմանիան
այս պատերազմում յաղթող չի հանդիսանալ: Ընդհակառակը իւրա-
քանչիւր յաղթութեան քալլ Գերմանիային տանում է դէպի ան-
կումն: Որչափ ձգձգուի պատերազմը՝ նոյնչափ էլ Գերմանիան
մօտենում է ցաւալի վախճանի: Այդպէս են եղրակացնում շատերը

պատերազմական, քաղաքական, տնտեսական և զրամական տեսակէտից: Հեղինակն այդ բոլոր տեսակէտներն էլ բացատրում է խելացի կերպով: Ուստի Գերմանիան պէտք է շտապի իւր փրկկութեան միակ ճանապարհն գտնելու, որովհետեւ Wenn Deutschland noch weiter «siegt, wie bisher, so wird es sich zum Tode siegen»:

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի.

Պատի նոր կոչը պատերազմոգ կողմերին խաղաղութեան մասին:

Բենեդիկտ XV պապը ներկայ պատերազմի տարեդարձի առթիւ հրատարակել է կոչ ուղղած ներկայ պատերազմոգ ազգերին ու նոցա գլխավորներին: Սկզբում նա յիշեցնում է իւր առաջին կոչի մասին՝ ուղղուած ազգերին և կառավարութեանց՝ յորդորելով խաղաղութեան դաշն կապել և վերջ տալ սոսկալի արիւնհեղութեանց և այնուհետեւ յանուն Աստուծոյ և Յիսուսի օրհնուած Արեան հրաւիրում է վերջ դնել սարսափելի սպանդանոցին, որ ամբողջ մի տարի նախատինք էր Եւրոպայի համար: Պատն աղաչում է նրանց լսել իւր խնդիրը: Իհարկէ, ասում է նա, պետութիւնները հնարաւորութիւն ունեն շարունակելու պատերազմը նիւթական միջոց ունենալու պատճառով, բայց չէ՞ որ այդ ամենը լինում է հազարաւոր երիտասարդ խորտակուող կեանքի, կործանուած քաղաքների ու գիւղերի, ևս դժբախտների դառն արցունքների գնով: Պապը հրաւիրում է թողնել միմեանց ոչնչացնելու մտադրութիւնը և մտածել այն մասին, որ ժողովուրդները չեն մեռնում, այլ հալածուածները և տանջուածները անհամբեր կերպով կրում են իրենց վրայ ծանրացած լուծը և սերունդէ սերունդ կտակում են ատելութիւնը և վրիժառութիւնը: «Ի՞նչու համար, հարցնում է պապը, հէնց այժմ խղճով քննութեան չառնել իրաւունքներն և արդարութիւնն ազգերի ցանկութեան: Ի՞նչու համար չսկսել հայեացքների անկեղծ փոխանակումն այդ իրաւունքները և ցանկութիւններն ըստ հնարաւորութեան յարգելու և վերջ դնելու անողորմ պատերազմին: Երանի է նա, ով առաջինը կը մեկնի թշնամուն ձիթենու ճիւղը՝ առաջարկելով խաղաղութեան խելացի պայմաններ: Բենեդիկտ XV-ը ուսուցանում է՝ որ աշխարհում հաւատարակչութիւնը և հաստատուն հանգստութիւնը հիմնւում է աւելի շուտ փոխադարձ բարեացակամութեան և ուրիշների իրաւունքն

ու արժանիքները յարգելու վրայ, քան բազմաթիւ զօրքերի ու բերդերի: Պապը հրաւիրում է խաղաղութեան բոլոր բարեկամներին ձեռք տալ իրեն պատերազմի վախճանը արագացնելու համար, և յայտնում է ջերմ ցանկութիւն, որպէս զի ժողովուրդները, միացած ևղբայրական սիրով, դառնան դէպի խաղաղ աշխատանքները, և վճռեն ազագայում իրենց վէճերը հիմնել ոչ թէ սրի, այլ արդարութեան և օրինականութեան վրայ: Այդ կը լինէր, նկատում է նա, ամենալաւն և ամենափառաւորը, քան նոցա նուաճումները: Վերջում Բենեդիկտ XV-ը օրհնում է բոլոր անդամներին իւր հօտի, այլ և նրանց, սորոնք չեն պատկանում կաթոլիկ դաւանութեան, ցանկանալով որ ամենքը միանան սիրոյ ամուր կապով:

Կարելի է մտածել՝ որ Պապի նոր կոչը, նախկին կոչի նման կը մնայ անհետեւանք, որը մի կողմից կարելի է բացատրել նաև նորանով, որ ներկայումս կաթոլիկների աչքում Պապի հեղինակութիւնն ընկել է պատերազմի նկատմամբ չէզոք մնալու պատճառով:

Բենեդիկտ XV-րդ պապից, ինչպէս նկատում է անգլիական կաթոլիկ հրապարակախօս Դիլլօնը, սպասում էին շլոյս, ձեռնարկութիւն և օգնութիւն մարդկային պատմութեան մոայլ շրջանում», իսկ նա միաց չէզոք հասարակական բարոյախօսութեան հարցերում»:

Պապը եւ Իտալական անպաշտպան հաղափներ: Աղբիատիկական ծովեզերքի քաղաքների եպիսկոպոսները դիմել են Պապին և հաղորդել, որ իրենց քաղաքների նշանաւոր եկեղեցիներին և արձաններին վտանգ է սպառնում աւստրիական նաւատորմի և տէրօպլանների կողմից՝ և խնդրում են, որ Պապը դիմումներ անի վտանգի առաջն առնելու համար: Պապի աւագ քարտուղարը՝ կարդինալ Գասպարին՝ յայտնում է նրանց Պապի հրամանով, որ հէնց որ Իտալիայի և Աւստրիայի մէջ պատերազմ սկսուեց՝ Պապը իսկոյն դիմել է Աւստրիայի Ֆրանց Ֆովսէփ կայսրին և աւստրօ-վենգերական կառավարութեան իւր ջերմ ցանկութիւնը յայտնելով, որ պատերազմը լինի համաձայն միջազգային օրէնքների և մարդասիրական զգացմունքների, և որպէս զի խնայուեն անալաշտպան քաղաքները, գեղարուեստի արձանները և տաճարները, մանաւանդ Լօրետտայի սրբարանը, Իտալիայի և ամբողջ աշխարհի այդ փառքը: Ճշմարիտ է աւելացնում է կարդինալը, թէև Պապի այդ ցանկութիւնը մինչև այժմ լրիւ կերպով չէ իրականացել,

բայց պէտք է վստահ լինել, որ այսուհետեւ էլ Պապը այդ ամենը չի թողնիլ առանց ուշադրութեան: Սակայն Պապի յաջողութիւնը այդ բոլորի նկատմամբ մնում է կասկածելի, քանի որ չէ երևում, որ նորա միջնորդութիւնները յարգուեն: Աւստրիան առանձին ուշադրութեան չէ արժանում Պապի միջնորդութիւնները, իսկ Գերմանիան էլ, որ ուղղութիւն է ապրիս Աւստրիային պատերազմական զործերում, ընդհակառակը Իտալիայի գեղարուեստական տաճարները և արձանները ոչնչացնելու խնդիրը համարում է իբրեւ պատիժ Իտալիային, որ իբրեւ թէ «դաւաճանեց» եռեակ դաշնակցութեան:

Կոմս Բոնի դը-Կաստելլոնի ամուսնալուծական գործի վախճանական վճիռը Պապական բարձրագոյն ատեանը—Սենեատուրան (Segnatura) կայացրել է վերջնական վճիռ կոմս Բոնի դը-Կաստելլոնի և Ամերիկացի խոշոր դրամատիրոջ աղջկայ Աննա Գուլդի ամուսնալուծական գործի, ճանաչելով՝ որ այդ պսակը է վաւերական: Սրանց պսակի գործը երկար ժամանակ կաթուղիկ աշխարհում մեծ հետաքրքրութեան առարկայ է եղել սկզբունքային տեսակէտից՝ կաթուղիկ եկեղեցու իրաւունքի նկատմամբ վաւերական կամ անվաւեր լինելու խնդրի առթիւ: Կաթուղիկ եկեղեցու կանոնական տեսակէտից՝ պսակը լուծել անկարելի է. բայց անվաւեր համարել կարելի է, եթէ օրինական հիմունքներ կան: Այդ տեսակէտից Կոմս Կաստելլոնան ի նկատի առնելով՝ որ լուծել պսակը անկարելի է, առաջ է բերում դատարանում պահանջ՝ որ իւր պսակը համարուի անվաւեր, պատճառաբանելով՝ որ իւր կինը, անդլիական եկեղեցու դաւանութեամբ 1895 թ. ամուսնանալով ի նկատի է ունեցել, ինչպէս ինքը կինն է յայտարարում, ամուսնական լուծանքի կապ հաստատել այնպէս՝ որ յետոյ, ըստ ցանկութեան, հնարաւորութիւն ունենայ բաժանուել մարդուց, որով և, պահանջ անողի (մարդու) կարծիքով, էականապէս ամուսնական համաձայնութեան իսկական բնութիւնը խախտուած է, մինչդեռ այդ կապակցութեան համաձայնութիւնն է անքակտելի: Պապական առաջին դատարանը, քննելով գործը 1911 թ., մերժել է մարդու պահանջը և թողել պսակը իւր զօրութեան մէջ: Կաստելլոնի բողոքի համաձայն երկրորդ անգամ գործը քննւում է դատարանում 1913 թ. և այս անգամ դատարանը պսակը համարում է անվաւեր: Դատարանի այդ վճիռը մեծ աղմուկ է հանում կաթուղիկների մէջ, որովհետեւ Կաստելլոնի պսակը անվաւեր համարելու սկզբունքը եթէ ընդունուի, այդ դէպքում մեծ չափերի

կարող է հասնել ամուսնալուծութիւնը, որովհետեւ բաւական կը լինի՝ որ իւրաքանչիւր ամուսնութեան սկզբում ամուսինները յայտարարեն՝ թէ իրենք ամուսնական կապով միանում են՝ ինկատի առնելով որ յետոյ պէտք է բաժանուեն։ Դատարանի «ամուսնութեան պաշտպան»-ի կողմից բողոք լինելով այդ վճռի դէմ՝ երրորդ անգամ նոյն դատարանում գործը քննւում է սոյն 1915 թ. և դատարանը վճռում է պսակը համարել վաւերական։ Դորանից յետոյ Կաստելլանօն բողոքում է այդ վճռի դէմ ամենաբարձր ատենին—Սենտեաուրի, բայց այստեղ էլ նորա բողոքը թողնում են առանց հետեանքի և պսակը մնում է իւր զօրութեան մէջ՝ ճանաչուելով վաւերական։ Այսպիսով Կոմսը իւր մտացածին պատճառաբանութիւններով չէ կարողանում լուծել տալ իւր պսակը Աննա Գուլդի հետ։

Կաթոլիկ մամուլը Ֆրանսիայում։ Հոլլանդական «De Toekomst» շաբաթաթերթում գետեղուած է հետաքրքրական յօդուած, որով տեղեկութիւն է հաղորդում թէ ինչ դրութեան մէջ է Ֆրանսիական կաթոլիկ մամուլը։ Հեղինակը Ֆրանսիայի կաթոլիկութեան ներկայ աննախանձելի դրութիւնը մասամբ բացատրում է և նորանով, որ այնտեղ կաթոլիկ մամուլը թոյլ է տարւում։ Յօդուածի հեղինակը առաջ է բերում հէնց իրենց կաթոլիկների քննադատութիւնը կաթոլիկ մամուլի մասին, որ իրենց մամուլը շատ թոյլ է տարւում, հաստատուն սկզբունքներով չեն առաջնորդւում, աշխատելով չգրգռել ոչ միապետականներին և ոչ էլ հասարակապետականներին, աշխատում են շատ տեղ տալ փոքրիկ աստուածաբանական հարցերի լուծման։ Ապա յօդուածագիրն առաջ է բերում վիճակագրութիւն, թէ 1911 թ. կաթոլիկ լրագիրներից իւրաքանչիւրը ռըշափով է տարածուած եղել։ Ամենից շատ բաժանորդներ ունեցել են՝ 1) La Croix—250,000. 2) Univers—5,000. Action Francaise—35,000. Echo de Paris—200,000, Figaro—80,000, Eclair—60,000. Temps—30,000։ Վերոյիշեալ լրագրերից իսկական կաթոլիկական համարւում են La Croix և Univers։ Իսկ ընդհակառակը հակակղերական թերթերից ամենից շատ տարածուած են՝ Humanité—125,000. Petite République—150,000. Matin—600,000. Journal—700,000. Petit Journal—800,000. Petit Parisien—1,300,000. 1912 թուին Փարիզում մի կաթոլիկ լրագրին գալիս էր 33 ոչ կաթոլիկական լրագիր, իսկ գաւառներում 649 կաթոլիկականին՝ 4396 ոչ կաթոլ. լրագիր։

Բ. Վ. Ա.